ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
«ՀԱՅԿԱԿԱՆ ԱՏՈՄԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆ»
փակ բաժնետիրական ընկերություն

Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, 0910, ք. Մեծամոր, հեռ./ֆաքս - (37410) 28 06 69, (37410) 28 85 80, կապի օպերատոր - (37410) 28 98 30, էլ.փոստ - anpp@anpp.am, anpp@haek.am

№Է/40/180-25 առ «24» 01 2025թ.

«Մաքս Շին» ՍՊԸ
տնօրեն
Վ. Պետրոսյանին

(Ծանուցում №ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-19/24-3-01/161 պայմանագրի միակողմանի լուծման մասին)

Հարգելի՛ պարոն Պետրոսյան,

«Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերության և «Մաքս Շին» ՍՊ ընկերության միջև 2024 թվականի ապրիլի 2-ին կնքվել է №ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-19/24-3-01/161 պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր), համաձայն որի «Մաքս Շին» ՍՊԸ-ն պարտավորվել է պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարել Պայմանագրի հավելված 1-ով՝ տեխնիկական բնութագրով նախատեսված ապրանքները (Պայմանագրի 1.1 կետ):

Պայմանագրով սահմանված է.

- 1.1. կետ՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով նախատեսված և տվյալ ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝ հայտերի բացման և գնահատման նիստի արձանագրությամբ՝ նույն ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող գնահատված ապրանքը (այսուհետ՝ ապրանք)...»:

- Գնորդն իրավունք ունի՝

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

- 2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.4 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.5 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

Պայմանագրի անբաժան մաս կազմող Հավելված 2-ով ապրանքի մատակարարման ժամկետը սահմանված է՝ «Պայմանագրի կնքման օրվանից 60 օրացուցային օրվա ընթացքում»: Պայմանագրի անբաժան մաս կազմող հավելված 1-ի 52-րդ չափաբաժնով սահմանված «տեքստիլ ճոպան» ապրանքը չի մատակարարվել, իսկ 53-րդ չափաբաժնով սահմանված 40 հատ «կարգավորվող ապարանջան լարի հետ» ապրանքը մատակարարվել է 4 հատ:

Հաշվի առնելով Պայմանագրի դրույթները՝ տեղեկացնում եմ, որ «ՀԱԷԿ» ՓԲ ընկերության կողմից մասնակի միակողմանի լուծվում է «ՀԱԷԿ» ՓԲԸ և «Մաքս Շին» ՍՊԸ-ի միջև 2024 թվականի ապրիլի 2-ին կնքված № ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-19/24-3-01/161 պայմանագիրը 52-րդ չափաբաժնի և 53-րդ չափաբաժնում ներկայացված թվով 36 հատ ապրանքների մասով և առաջարկում եմ ծանուցվելու օրվանից հաշված 3 աշխատանքային օրվա ընթացքում «ՀԱԷԿ» ՓԲ ընկերության «Կոնվերս բանկ» ՓԲԸ 1930000199200100 հաշվեհամարին վճարել պայմանագրի (27 040 ՀՀ դրամ) և որակավորման (40 560 ՀՀ դրամ) ապահովումները:

Հարգանքով՝

Գլխավոր տնօրեն՝ Է. Մարտիրոսյան

Կատ.
ԳԲԲ գլխավոր մասնագետ –
խմբի ղեկավար
Հռիփսիմե Ռամազյան
Հեռ. 010-20-04-91